«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

ՀԵՂԻՆԱԿ Նարինե Կակոսյան Ալբերտի

ՄԱՐԶ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Մարալիկի թիվ 2 միջնակարգ դպրոց, ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն ---------- 3 – 4
2. Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում
– Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը հեքիաթի ուսուցման միջոցով----------5 - 7
– Հեքիաթների ուսուցման գործընթացն ու մեթոդիկան ----------8 -9
– Հեքիաթը որպես երեխայի սոցիալականացման միջոց----------10 – 15
3. Հետազոտական մաս----------16 -17
4. Եզրակացություն----------18
5. Օգտագործված գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Արժեքային համակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեքային համակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեքային համակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

կրթության վճռորոշ տարրն է:

Թեմայի արդիականությունը: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական,դաստիրակչական կամ արժեաքյին և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի համար նախատեսվում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների,կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Թեմայի նպատակը: Զարգացնել սովորողների ճանաչողական կարողությունները, տրամաբանական մտածողությունը, իմացական դաշտի ընդլայնումը: Հարստացնել գիտելիքները, ձևավորել արժեքային համակարգ: Մայրենիի դասագրքերում զետեղված հեքիաթների՝ դպրոցականների դաստիարակության,

աշխատասիրության, մտածողության, բարոյական արժեքների ձևավորման, զարգացման վրա ներգործության բացահայտումն է և հեքիաթաստեղծման կարողությունների ձևավորմանը նպաստող մեթոդական քայլաշարի համակար

Նպատակից ելնելով սահմանենք հետազոտության հետևյալ **խնդիրները**.

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականություն
2. սովորողների մոտ ձևավորել ճանաչողական կարողություններ, աշխարհընկալում, տրամաբանական մտածողություն, ընդլայնել իմացական դաշտը,
3. մատնանշել հեքիաթների անմիջական ազդեցությունը աշակերտների արժեքային համակարգի ձևավորման վրա,
4. զարգացնել հեքիաթը սահուն կարդալու և վերարտադրելու կարողություններ,
5. բացահայտել սովորողների բառապաշարի հարստացման ուղիները, որը նպաստում է սովորողների մեւ արժեքային համակարգի ձևավորմանը,
6. ձևավորել հոգևոր և բարոյական հայացքներ։

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետազոտության

հետևյալ **մեթոդները**. դիտում, զրույց, հարցում, անկետավորում, փորձարարական

ուսուցում։

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԵՔԻԱԹԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ

Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին և ամենատարածված ստեղծագործություններից են, դրանք ծագել են մարդկության մանկության շրջանում, սակայն այսօր էլ շարունակում են ստեղծվել և հուզել ընթերցողներին իրենց անմիջականությամբ, պարզությամբ և խոր լավատեսությամբ: Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ: Ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել Ղ. Աղայանը, Հ Թումանյանը և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: Դասագրքերում հանդիպում են նաև օտար հեքիաթներ, որոնք նույնպես անհրաժեշտություն են՝ այլ ժողովուրդների կյանքին, կենցաղին, մտածողության եղանակին ու ստեղծագործություններին ծանոթանալու համար: Հեքիաթները ստեղծվել են մարդկային հասարակարգի մանկության շրջանում, երբ մարդն ի վիճակի չէր թափանցելու շրջապատի բնական և հասարակական երևույթների էության մեջ, ըմբռնելու դրանց միջև եղած պատճառահետևանքային կապերը: Հենց դրա հետևանքով էլ հեքիաթները շատ պարզ, դյուրահաս և հաճելի են երեխաների համար, նրանք ոչ միայն սիրով լսում կամ կարդում են դրանք, այլև կրկնակի և եռակի անգամ վերընթերցում: Չկա մարդ, որ հեքիաթ չսիրի: Հեքիաթները բարի ու գեղեցիկ ավարտ ունեցող իրական կամ երևակայական բնույթի մտացածին պատմություններ են, որտեղ արտահայտված են մարդկանց երազանքներն ու ազնիվ ցանկությունները: Հեքիաթները ժողովրդական բանահյուսության ամենահին, ամենասիրված ու ամենատարածված ստեղծագործություններից են: Բանահյուսական բոլոր ժանրերի, այդ թվում հեքիաթների ստեղծողն ու պահպանողը ժողովուրդն է: Մարդկությանը հմայել են արդարությունը պաշտպանող և չարը հալածող հեքիաթային խիզախները: Հեքիաթներն իրենց հերոսական ու մարդասիրական ոգով, առօրյա կենսափորձից բխող առողջ բարոյախոսության և խորիմաստ փիլիսոփայությամբ գրավել ու

գրավում են բոլոր տարիքի ընթերցողներին, առավել ևս մանուկներին: Թումանյանը հեքիաթների մասին ասել է, որ դրանք ամենաիմաստուն գրվածքներն են, քանի որ դրանց մեջ խորհրդանշական ձևով արտահայտված են հավերժական գաղափարներ: Իսկապես, ամեն հեքիաթ բարձր գաղափարների ու մարդկային հարաբերությունների արտահայտություն է: Հեքիաթներում հերոսների բնավորության գծերը մեկ առ մեկ չեն հիշվում, պարզապես ասվում է՝ չար ու բարի: Հեքիաթի մեջ մարդիկ և դեպքերը պատկերվում են չափազանցված կամ այլաբանորեն, հաճախ էլ հրաշապատում գծերով:

Հեքիաթները լինում են երեք տեսակ՝ բուսակենդանական, հրաշապատում և իրապատում: Իրապատում հեքիաթները լինում են՝ կենցաղային, հերոսական, սոցիալական բնույթի և այլն: Այս բոլորի հիմքն էլ մարդկային կյանքն է՝ բազմապիսի փոխհարաբերություններով: Մայրենիի դասագրքերում կան ոչ միայն ժողովրդական հեքիաթներ, այլև հեքիաթների գրական մշակումներ.ժողովրդական հեքիաթների լավագույն մշակողներ են եղել՝ Ղ. Աղայանը, Հ. Թումանյանը, և ուրիշներ, որոնց մշակած հեքիաթները մեր դասագրքերի զարդն են: [Գյուլամիրյան Ջ., «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա» Երևան 2015 - էջ 180]

Հեքիաթում իրականն ու երևակայականը հանդես են գալիս միաձուլված: Հրաշապատում հեքիաթները, լինելով նախնադարյան մարդու ստեղծագործություններ, վառ երևակայության, հոգիների, կախարդական աշխարհի և առհասարակ գերբնական երևույթների հետ կապված պարզ պատմություններ են, որտեղ հեքիաթի հերոսներին օգնում կամ խանգարում են թռչող գորգն ու գավազանը, ցախավելը, չար կախարդներն ու բարի փերիները: Կախարդական հեքիաթների հիմքում ընկած է չարի ու բարու պայքարը, որն ավարտվում է բարու հաղթանակով, և ընթերցողի մեջ առաջանում է հավատ չար ուժերի կործանման անխուսափելության նկատմամբ: Բուսակենդանական հեքիաթի կառուցվածքը պարզ է. այստեղ բացակայում են կախարդական երևույթներն ու առարկաները: Հեքիաթի հիմնական հերոսները կենդանիներն ու բույսերն են: Նրանցից յուրաքանչյուրը պատկերվում է իրեն հատուկ գծերով:

Ժողովրդական հեքիաթներում ընդգծված է ժողովուրդների միասնության գաղափարը: Բազմաթիվ հեքիաթներ կան , որոնցում դրական հերոսը հաղթանակի է

հասնում այլ ազգերի ներկայացուցիչների օժանդակության շնորհիվ, շատ հեքիաթներում դրական հերոսը սիրահարվում է այլ ազգի պատկանող աղջկան և բազմաթիվ դժվարություններ հաղթահարելու գնով իր երազն իրականություն դարձնում: Օրենքը թշնամանք է սահմանել ժողովուրդների միջև, ժողովուրդն օրենքին դեմ է գնացել, աչքը չի հեռացրել եղբայրության կամուրջից: [Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., Զանգակ, 2008, էջ 68]

Ընտանիքը հասարակական կյանքում ամենակարևոր դերն ունի: Բազմաթիվ հեքիաթներում գովաբանվել են համերաշխ ընտանիքը, ծնողներին լսող զավակները և զավակի նկատմամբ հոգատարություն ցուցաբերող ծնողները: [Դոլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Ե., Զանգակ, 2008,էջ 69]

Հեքիաթն ունի դաստիարակչական հզոր արժեք, բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Հենց այս հանգամանքն էլ ուժեղացնում է երեխայի հոգու, համոզմունքների ու զգացմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Հեքիաթը միաժամանակ բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Հեքիաթների ուսումնասիրումն ունի երկու հիմնական փուլ՝ բովանդակության ընկալում և երևակայական կողմի բացահայտում: Սրանք երկուսն էլ խիստ կարևոր են նյութի յուրացման և դրանից բխող կրթական ու դաստիարակչական նպատակների համար: Հեքիաթների ուսումնասիրությունն այնպես պետք է իրականացնել, որ իրականն ու երևակայականը թե՛ իրենց փոխադարձ միասնության մեջ և թե՛ առանձին-առանձին հասնեն երեխաների գիտակցությանը: Նախ պետք է պարզաբանել բովանդակությունը, ինչպես պատմվածքինը, անցկացնել նախապատրաստական զրույց, սովորեցնել կարդալ, անծանոթ բառերը բացատրել, հեքիաթի բովանդակությունը մանրամասն ու համառոտ, փոխելով ու ստեղծագործելով վերատադրել, գործող անձերին ու նրանց կատարած գործողությունները նկարագրել, հարցերով ամփոփել և այլն: Իսկ հետո անհրաժեշտ է բացահայտել հեքիաթային կամ երևակայական կողմը, կատարել բարոյախոսական եզրակցություն՝ համապատասխան առած-ասածվացքներ գտնելով և հեքիաթի հետ կապելով: Երեխաներին պիտի բացատրել, որ հեքիաթում մի խումբ հերոսներ գործում են ինչ-որ արարքներ՝ իրենց նպատակներին հասնելու մղումով: Իրար դեմ կանգնած են բարի և չար ուժեր: Հեքիաթն անպայման պիտի ավարտվի բարի ուժերի հաղթանակով, որը հեշտությամբ չի տրվում. գլխավոր հերոսներն անցնում են բազում դժվարին փորձությունների միջով, կատարում իրենց առջև դրված անիրականանալի պայմանները, հաղթահարում անհաղթահարելի արգելքներ, և ամենակարևորը, բարին մենակ չի գործում. նրան օգնում են հրաշագործ ուժերը:

Այդպիսով՝ երեխան ըմբռնում է բարու և չարի գործոնը ոչ միայն հեքիաթում, այլև կյանքում, առօրյայում: Հեքիաթի վերջում բարու հաղթանակը կոգևորի նրան՝ կատարելու բարի գործեր և հասկանալու, որ հաղթանակը հեշտ չի տրվում: Այսինքն՝ հեքիաթը պիտի մեկնաբանվի և իմաստավորվի իր իսկ կյանքի օրինակով: Երեխայի համար պետք է հեքիաթն կարդալ այնպես, որ այն նրան հաճույք պատճառի, նա մտովի տեսնի այդ պատկերները, հետո նոր կարդալ հեքիաթն ու վերլուծել՝ օգտագործելով դիդակտիկ պարագաներ: Այս դեպքում օգնում են հստակ կառուցված խոսքը, պատմողի հեքիաթային ոճը, ձայնը, որը պետք է տարբերվի պատմվածքն ընթերցելու ձայնից: Լսելուց հետո երեխաներին պիտի հանձնարարել, որ իրենք

վերարտադրեն հեքիաթի բովանդակությունը: Հեքիաթը վերարտադրելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին ու ոճին, հաճախ պատմեն հենց այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը, գործածեն հերոսների խոսքերը, ժողովրդի բառն ու բանը: Անշուշտ, այդ դեպքում պիտի բացատրվեն անծանոթ բառերը, կամ երեխաներն իրենք պետք է ասեն հեքիաթում գործածված բառերի և արտահայտությունների գրական համարժեքները:

Հեքիաթի ուսումնասիրման հորինողական ձևը ստեղծագործական մեթոդ է և ավելի լայն կիրառություն ունի կրտսեր տարիքի երեխաների ուսուցման գործընթացում, երբ երեխային հնարավորություն է տրվում յուրովի վերարտադրելու հեքիաթի բովանդակությունը, փոփոխություններ մտցնելու դեպքերի զարգացման մեջ՝ հավատարիմ մնալով հեքիաթի ընդհանուր ոգուն: Միշտ չէ, որ պետք է պատրաստի հեքիաթներ տանք երեխաներին, որպեսզի նրանք վերարտադրեն այն պասիվ կերպով. Երբեմն կարելի է հանձնարարել նույն թեմայով հեքիաթներ հորինել, որը զարգացնում է երևակայությունը և մղում ստեղծագործելու:

Հեքիաթի ուսումնասիրում կարելի է անցկացնել նաև խաղային ձևերով: Օրինակ՝ հեքիաթի բեմականացում:

Բեմականացումների ժամանակ երեխան սովորում է ոչ միայն խոսք կառուցել, այլև նոր բարոյական հատկանիշներ է ձեռք բերում, ճիշտ պատկերացումներ ունենում տարբեր երևույթների, առարկաների, մարդկանց, բույսերի ու կենդանիների մասին: [Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, Ե, 2016, էջ 113]

ՀԵՔԻԱԹԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Յուրաքանչյուր հեքիաթ ունի դաստիարակչական հզոր արժեք և բարոյական կարևոր սկզբունքներ, որոնք ոչ թե ներկայացվում են իբրև քարոզ, այլ արտահայտվում են հերոսների արարքների, խոսքերի միջոցով: Աննկարագրելիորեն մեծ է երեխայի հոգու, զգացմունքների և համոզմունքների վրա հեքիաթի թողած ազդեցությունը: Ինչպես հանրաճանաչ իտալացի գրող Ջանի Ռոդարին է նշում, հեքիաթը երեխային պետք է կողմնորոշվելու, իրեն ուսումնասիրելու, իր հնարավորությունները չափելու, գնահատելու համար: Հեքիաթը միաժամանակ տեղծագործական ունակությունների, բանավոր կապակցված խոսքի զարգացման արդյունավետ միջոց է:

Անսահման մեծ է հեքիաթների ինչպես դաստիարակչական, այնպես էլ պատմաճանաչողական և գրական-գեղարվեստական արժեքն ու նշանակությունը: Հեքիաթները ժողովրդի համար միայն ժամանցի առարկա չեն եղել, որոնցով կարելի էր կարճել ձմռան երկար ու ձանձրալի գիշերները, փարատել ցերեկվա ծանր առօրյայի ճնշիչ տպավորությունը: Հեքիաթները կատարել են հասարակական լայն զանգվածների լավագույն ձգտումների ու իղձերի յուրահատուկ հաղորդիչի դերը, ամրապնդել են նրանց նվիրական ավանդները իրար հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Հեքիաթների միջոցով ժողովուրդը դրսևորել է այն ոգևորումները, որոնք մղել է ինքը բնության տարերային ուժերի հաղթահարման համար, արտահայտել իր մտորումները, որոնել է իր կրած տառապանքների պատճառները, պայքարի կոչ է արել ամեն տիպի բռնության, ճնշման, անարդարության ու շահագործման դեմ:

Յուրաքանչյուր հեքիաթ երեխաներին մատչելի լեզվով նրանց կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին:

Հեքիաթների՝ երեխաների զարգացման գործում կիրառման նպատակները բազմազան են. սկսած երևակայությունը զարգացնելուց մինչև ճիշտ խոսքի ձևավորում: Հեքիաթը երեխաներին մատչելի լեզվով նրանց կյանք է սովորեցնում, պատմում չարի ու բարու մասին: Երեխաներն ավելի հեշտ են ընկալում հեքիաթը, քան թե մեծահասակների դաստիարակչական քարոզները: Ուսումնասիրությունները

ցույց են տվել. երեխաները, որոնց փոքր հասակից սկսած հեքիաթներ են պատմել, ավելի շուտ են սովորում իրենց մտքերը ճիշտ արտահայտել, արագ են սոցիալականացվում միջավայրին։

Հեքիաթների հիմնական նպատակն է զարգացնել երեխայի երևակայությունը և ստեղծագործական պոտենցիալը, օգնել սոցիալակացվել միջավայրին: Մանկական հեքիաթները ընդլայնում են երեխայի բառապաշարը, օգնում են ճիշտ և տրամաբանական խոսք կազմել:

Երեխաներն ընդհանրապես իրականությունը պատկերավոր են ընկալում, իսկ հեքիաթները հենց նպաստում են իրականության ճիշտ ընկալմանը: Երեխաները հեքիաթների միջոցով պատկերավոր են ընկալում նաև չարն ու բարին: Հեքիաթներում միշտ հաղթում է բարին, ինչը երեխային կօգնի հաղթահարել կյանքի դժվարությունները՝ ենթագիտակցությունում ունենալով բարու հաղթանակի գաղափարը: Նույն հեքիաթը երեխային կարելի է մի քանի անգամ պատմել, որպեսզի նաև լավ ընկալի հեքիաթի բուն ասելիքը:

Հեքիաթների սյուժեն ունի մի հիմնական գիծ՝ չարի և բարու պայքար, որի արդյունքում միշտ հաղթում է բարին: Այս ամենը, կարելի է ասել, ձևավորում է երեխաների արժեհամակարգը: Պետք է միշտ հիշել, որ երեխաները ունեն շատ նուրբ հոգի և զգացմունքներ, նրանց համար դժվար է հասկանալ ու ընդունել իրականությունը9: Նաև անհրաժեշտ է գիտենալ, որ երեխաների համար պետք է հեքիաթներ կարդալ այն տարիքից, երբ նրանք հասկանում են խոսքը: Դա արդեն 2-3 տարեկան երեխաներն են:

Հեքիաթով է սկսվում երեխայի ծանոթությունը արտաքին աշխարհի հետ: Ցանկացած հեքիաթ պատմություն է մարդկանց փոխհարաբերությունների, մեր կյանքում գործող օրենքների մասին: Եվ միաժամանակ դրանք բոլորը ներկայացվում են երեխայի համար հասկանալի լեզվով: Հեքիաթի շնորհիվ զարգանում է երեխայի երևակայությունը և ստեղծագործելու ունակությունը: Լավ հեքիաթը կյանքի ծնունդ է՝ խաղ, արկած, հրաշք, ճակատագիր… հեքիաթի թեմաները անվերջ են: Լսելով հեքիաթը՝ երեխան ակամա այնտեղ գտնում է իր կյանքին համապատասխան իրավիճակներ, փորձում է իրեն նույնացնել համարձակ և քաջարի հերոսների հետ:

Երբեմն մեծահասակները, ցանկանալով երեխայի հետ խոսել իրենց դժվարությունների մասին կամ ինչ-որ բան հուշել, դժվարանում են համապատասխան բառեր գտնել: Վախենում են, որ երեխան ճիշտ չի հասկանա իրենց: Այդ իրավիճակից ելք կա, հարկավոր է, որ մեծահասակը երեխայի հետ ընկղմվի երևակայության և կախարդանքի աշխարհը, իսկ գործնական ամենալավ օգնականը հեքիաթային պատմություններն են:

Սակայն՝ սովորական հեքիաթ պատմելը մի բան է, հեքիաթաթերապիան՝ այլ բան: Այն հեքիաթները, որոնք գործածվում են հեքիաթաթերապիայի դեպքում, խորթ են անտեղյակ ականջին: Գրական հեքիաթները հեքիաթաթերապիայի մեջ կարող են օգտագործվել որպես կանխարգելում. մոդել, հարաբերությունների զարգացման միջոց, բայց չեն կարող հիմնական նյութ լինել: Այսպես կոչված սովորական կամ գրական հեքիաթները հաճախ հոգեբանական հեքիաթների հետ նույն գրքում են տպվում, նախ այն պատճառով, որ դեռ հնուց փորձում են հոգեբանությունն ու գրականությունը համատեղել՝ ոչ թե դատողությունների մակարդակով, այլ որպես պատրաստի նյութ:

Հեքիաթի օգնությամբ ընթերցողը կամ լսողը հանդիպում է ինքն իրեն, բացահայտում է իր գաղտնի, դեռ չբացահայտված կողմերը: Մասնագետները հեքիաթի միջոցով կարող են բացահայտել լուրջ խնդիրներ: Բոլոր երեխաներն էլ ունեն իրենց սիրելի հեքիաթները և այդ ընտրությունը հենց այնպես չէ: Երեխան սիրում է այն հեքիաթը, որում հեքիաթի հերոսը վարվում է այնպես, ինչպես ինքը կվարվեր: Ծնողը, պարզելով երեխայի սիրելի հեքիաթը, կարող է ավելի ճիշտ հասկանալ իր երեխային:

Հեքիաթի ազդեցության տակ դուրս են գալիս անհատի պոռթկումները, արտահայտումները այնքան ճիշտ են լինում, որ ինչ իրեն խանգարում է, չի թողնում հանգիստ ապրի, դուրս է բերում: «Հեքիաթի ընտրությունը կապված է դիմացինից, դիմացինն է թելադրում, թե ինչպիսի հեքիաթ ընտրվի: Երբեմն հեքիաթի ընթացքը կարելի է փոխել՝

Որպես ստուգիչ թեստ շատ արդյունավետ մեթոդ է հեքիաթը թողնել անավարտ, որպեսզի երեխան ինքը շարունակի: «Եթե երեխան իր ստեղծած հեքիաթը ավարտում

է բացասական, դա նշանակում է, որ ինքը դեռ խնդիր ունի, հեքիաթաթերապևտը պետք է շարունակի այնքան մինչև հեքիաթի վերջաբանը լինի դրական: Նմանատիպ թերապիաները շաբաթը մեկ անգամից ավել շատ է, քանի որ երեխան պետք է կարողանա մարսի այդ ամենը, մտածելու ժամանակ ունենա, եզրահանգի ինչ-որ բանի:

«…Երեխան հեքիաթից, տվյալ իրավիճակից, կյանքի յուրաքանչյուր իրադարձությունից վերցնում է այն, ինչը նրան հետաքրքրում է, ինչի կարիքը նա ունի, ոչ մի րոպե չընդհատելով ընտրելու աշխատանքը»…

Դաստիարակության մեջ ժառանգականության եւ միջավայրի անբարենպաստ ազդեցությունը կարելի է երեխայի մեջ ոչ միայն նվազեցնել, այլ զարգացնել նրա այն հատկանիշները, որ նա միջավայրից վերցնի դրականը, ինչպես նաեւ իր ժառանգական հնարավորություններն առավելագույնս օգտագործի իր մտավոր զարգացման համար:

Այս տարիքում գործունեության ձև են հանդիսանում ինչպես խաղը, այնպես էլ հեքիաթը: Երեխան հայտնվում է ստեղծագործության հերոսի դերում, փորձում է հաղթահարել նրա ճանապարհին եղած խոչընդոտները: Ըստ Շ. Բյուլերի, հեքիաթների հերոսները պարզ են և տիպիկ, նրանք զուրկ են անհատականությունից, հաճախ նույնիսկ աննուներ չեն ունենում, նրանց տրվում են երկու-երեք որակներ: Բայց այդ բնութագրերը հասցվում են բացարձակ աստիճանի. չտեսնված բարություն, խիզախություն, հնարամտություն:

Հեքիաթի օգնությամբ ընթերցողը կամ լսողը հանդիպում է ինքն իրեն, բացահայտում է իր գաղտնի, դեռ չբացահայտված կողմերը: Մասնագետները հեքիաթի միջոցով կարող են բացահայտել լուրջ խնդիրներ: Բոլոր երեխաներն էլ ունեն իրենց սիրելի հեքիաթները և այդ ընտրությունը հենց այնպես չէ: Երեխան սիրում է այն հեքիաթը, որում հեքիաթի հերոսը վարվում է այնպես, ինչպես ինքը կվարվեր: Ծնողը, պարզելով երեխայի սիրելի հեքիաթը, կարող է ավելի ճիշտ հասկանալ իր երեխային:

Հեքիաթի ազդեցության տակ դուրս են գալիս անհատի պոռթկումները, արտահայտումները այնքան ճիշտ են լինում, որ ինչ իրեն խանգարում է, չի թողնում

հանգիստ ապրի, դուրս է բերում: «Հեքիաթի ընտրությունը կապված է դիմացինից, դիմացինն է թելադրում, թե ինչպիսի հեքիաթ ընտրվի: Երբեմն հեքիաթի ընթացքը կարելի է փոխել՝

Որպես ստուգիչ թեստ շատ արդյունավետ մեթոդ է հեքիաթը թողնել անավարտ, որպեսզի երեխան ինքը շարունակի: «Եթե երեխան իր ստեղծած հեքիաթը ավարտում է բացասական, դա նշանակում է, որ ինքը դեռ խնդիր ունի, հեքիաթաթերապևտը պետք է շարունակի այնքան մինչև հեքիաթի վերջաբանը լինի դրական: Նմանատիպ թերապիաները շաբաթը մեկ անգամից ավել շատ է, քանի որ երեխան պետք է կարողանա մարսի այդ ամենը, մտածելու ժամանակ ունենա, եզրահանգի ինչ-որ բանի:

Մյուս կողմից, հեքիաթում իր արտացոլումն է գտնում մարդկության մշակութային ժառանգություն և հեքիարթի միջոցով հաղորդվում է երեխային: Հեքիաթը նպաստում է երևակայության զարգացմանը, իսկ դա անհրաժեշտ է երեխային իր սեփական խնդիրների լուծման համար: Հեքիաթն առաջարկում է երեխային կերպարներ, որոնցով նա ուրախանում է, իր համար աննկատելիորեն յուրացնելով կենսակարևոր ինֆորմացիան:

Հեքիաթը օգնում է լուծել բարոյական խնդիրներ: Նրանում բոլոր հերոսներն ունեն հստակ բարոյական կողմնորոշում: Նրանք կամ ամբողջովին լավն են, կամ ամբողջովին վատը: Դա շատ կարևոր է բարու և չարի սահմանազատման, նրա սեփական բարդ զգացմունքների կարգավորման համար: Երեխան նույնականացնում է իրեն դրական հերոսի հետ: Սա տեղի է ունենում, ոչ թե որովհետև երեխան իր բնույթով լավն է, այլ այդ հերոսի դիրքը մյուսների համեմատ ավելի գրավիչ է: Այսպիսով, հեքիաթը ոչ միայն պահպանում է բարին երեխայի մեջ, այլ նաև սերմանում է այն:

Հեքիաթի միջոցով երեխաների մեջ սերմանվում են տվյալ հասարակության մեջ ընդունված արժեքները, բարոյական նորմերը, որոնք երեխային առաջարկում են որոշակի վարքի մոդելներ, օրինակներ:

Ուշինսկին դաստիարակչական առումով հեքիաթները շատ ավելի բարձր էր դասում, քան մանկական գրականության մյուս բոլոր ժանրերը: Եվ այդ սկզբունքից ելնելով նա իր կազմած դասագրքերում մեծ տեղ էր տալիս հեքիաթներին:

Անգնահատելի է հեքիաթների կարրևորությունը երեխայի անձի ձևավորման և սոցիալականացման գործում: Դա են հաստատում համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականների տեսակետները.

«…Երեխան հեքիաթից, տվյալ իրավիճակից, կյանքի յուրաքանչյուր իրադարձությունից վերցնում է այն, ինչը նրան հետաքրքրում է, ինչի կարիքը նա ունի, ոչ մի բոպե չընդհատելով ընտրելու աշխատանքը: Ուրիշ ինչի՞ համար է նրան անհրաժեշտ հեքիաթը: Նրա համար, որպեսզի ստեղծի իր բանականության կառուցվածքը, հաստատի տարբեր բնույթի կապեր. «ես եւ մյուսները», «ես եւ առարկաները», «իրական եւ մտացածին առարկաներ»: Հեքիաթը նրան անհրաժեշտ է, որպեսզի իր համար պատկերացում ստեղծի տարածության («հեռու-մոտիկ») եւ ժամանակի («վաղուց-հիմա», «սկզբում-հետո», «երեկ-այսօր-վաղը») մասին»: [Ուշինսկի Կ. Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 1, Երևան 1958թ. , էջ 89 - 91]

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

Միայն ճիշտ ընտրված և ճիշտ ուսումնասիրված հեքիաթների միջոցով է հնարավոր երեխաներին փոխանցել այն ամենը, ինչը պետք է նրանց ինքնահաստատման և զարգացման համար, օգնել ինքնավստահություն ձեռք բերել, հաղթահարել բարդությունները, դիմագրավել կյանքի դժվարությունները և վերջապես դրական հատկություններ ձևավորել, որն էլ նրանց առաջին քայլն է դեպի կյանք: [Վասիլ Հարությունյան, Հեքիաթների դաստիարակչական դերը..,]

Հեքիաթի ուսուցման հիմնական խնդիրներն են՝ հեքիաթի դերի ու նշանակության ճանաչում, սովորողների բարոյական որակների ձևավորում, հեքիաթի գեղարվեստական առանձնահատկությունների ընկալում: Ուսուցման գործընթացի ուղղվածությունը՝ մտագրոհ, հեքիաթ բառով, հեքիաթի լուռ և բարձրաձայն ընթերցում, բնագրային աշխատանք՝ բառերի բացատրություն , ամփոփ հատվածների առանձնացում և վերնագրում, բովանդակության վերարտադրում, կերպարների բնութագրում, եզրահանգում:

եքիաթը երեխայից պահանջում է յուրահատուկ որակներ՝ բառերի պատկերային զգացողություն, ստեղծագործական մտածողություն, հերոսների վարքի դրդապատճառների ընկալում, ապրումակցում և այլն: Այս բնութագրիչներն ընդհանուր առմամբ ենթադրում են հատուկ գեղագիտական ընկալում, որը ձևավորվում է հատկապես հեքիաթի ուսուցման միջոցով: Հետևաբար հեքիաթների վերլուծության ժամանակ ուսուցչի խնդիրն է՝ օգնել սովորողին հասկանալու հեքիաթի հատկանիշները: Օրինակ, հեքիաթի ընթերցման ժամանակ ուսուցիչն առաջադրում է գծել հեքիաթի հերոսի ճամփորդության երթուղին կամ էլ առաջադրվում է նույն հեքիաթը պատմել տարբեր սովորողների կողմից: Շատ կարևոր է նաև սովորեցնել երեխային պատմել հեքիաթի դիպաշարը: Նպատակահարմար է, օրինակ , որ հեքիաթի բեմականացման ժամանակ երեխան ինքն ընտրի այն հերոսին, ում դերը պետք է ստանձնի: Այսպես մեծանում է ապրումակցումը:[Ի. Վաչկով «Հեքիաթաբուժություն . ինքնագիտակցության զարգացումը հեքիաթի միջոցով»]

Գեղագիտական դաստիարակության իմաստով հեքիաթի արդյունավետ ուսուցման համար մեծ նշանակություն ունի հեքիաթի պատկերազարդումների դիտումը: Այն

օգնում է երեխային հասկանալ և հիշել կարդացածը: Հեքիաթների շատ պատկերազարդումներ հնարավորություն են տալիս պատկերացնել այնպիսի երևույթներ ու առարկաներ, որոնք երեխան չի կարող տեսնել անմիջականորեն:

Հեքիաթի միջոցով ոչ միայն կարելի է ձևավորել ու զարգացնել երեխաների երևակայությունը, արժեքային համակարգն, այլև օգնել հատուկ կարիքներով երեխաների հարաբերությունների կարգավորմանը: Այդ երեխաներին օգնելու մեթոդներից մեկն էլ հեքիաթաբուժությունն է:

Հեքիաթաբուժությանը նպաստում է հեքիաթի հիմքում ընկած այլաբանությունը, որն իրական աշխարհի և առաջին հերթին երեխայի չբացահայտված ներքին աշխարհի համար կախարդական հայելի է: [Ի. Վաչկովը իր «Հեքիաթաբուժություն . ինքնագիտակցության զարգացումը հեքիաթի միջոցով]

Հեքիաթաբուժությամբ զբաղվող շատ հետազոտողներ պարզել են, որ երեխաները հեքիաթներ լսելիս իրենց պատկերացնում են հեքիաթային հերոսների փոխարեն և աստիճանաբար սկսում են հասկանալ՝ ինչ է նշանակում բարի, քանի որ իրական կյանքում և մարդկանց հետ փոխհարաբերություններում ամրապնդվում են բարոյական հասկացություններ, որոնք արտահայտված են հերոսների կերպարներում:

Հեքիաթաբուժությունը կիրառվում է ագրեսիվ, ներամփոփ, վախկոտ, բարդություններ և այլ խնդիրներ ունեցող, անհանգիստ երեխաների հետ աշխատանքի ժամանակ: Հեքիաթի աշխարհ մտնելով՝ երեխան թափանցում է իր հոգու խորքերը, ուր խառնաշփոթ է տիրում զանազան հույզերի ու զգացողությունների պատճառով: Հեքիաթներն ունակ են վերացնելու երեխայի ներաշխարհի խառնաշփոթությունը:

Պարզեցինք աշակերտների հեքիաթ հյուսելու կարողության զարգացվածության մակարդակը

Հայտորոշիչ թեստը կատարել ենք հինգերորդ դասարանում՝ 12 աշակերտի շրջանում: Ստորև ներկայացնում ենք հայտորոշիչ թեստի արդյունքները: Թեստի առաջին՝ «Հիշու՞մ եք՝ ո՛վ է առաջին անգամ ձեզ հեքիաթ պատմել»: հարցին աշակերտների 8%-ը պատասխանել է (1 աշակերտ), որ հայրիկն է պատմել, 59%–ը(7 աշակերտ)՝ մայրիկը, 25%–ը (3 աշակերտ)՝ տատիկը, 8%–ը (7 աշակերտ)՝ պապիկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքում շոշափվեց է մի այնպիսի թեմա ,որը անկասկած շատ մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին:

Մեր կատարած հետազոտությունների արդյունքները հնարավորություն են տալիս կատարելու հետևյալ եզրակացությունները

- Երեխաների համար հեքիաթ ընթերցելիս պետք է հեքիաթի ներքին հույզերն ու զգացմունքայնությունը հասցնել այնպիսի ընթերցանությամբ, որը նրանց մեջ սկզբից կեթ առաջացնի համապատասխան ապրումներ և հուզական վիճակ:
- Ցանկացած առարկայի ուսուցում, որպեսզի արդյունավետ լինի, պետք է կազմակերպել խաղի, հեքիաթի ձևով՝ սովորեցնել այնպես, ինչպես նա ընկալում է աշխարհը՝ գունագեղ , հստակ ու մատչելի:
- Կարևոր է՝ ուսուցիչը դասը հետաքրքիր և արդյունավետ անցկացնի՝ կիրառելով ուսուցման փոխներգործուն մեթոդներ, որոնք աշակերտին կդարձնեն դասի անմիջական մասնակիցը և հնարավորություն կընձեռեն մտածողության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
- Հեքիաթը արդյունավետ միջոց է ոչ միայն երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման, այլև մտքի ճկունության, երևակայության զարգացման գործում, ինչպես նաև արժեքային համակարգի ձևավորման գործում:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հպարտ լինի այն գիտակցումով , որ կարող է կրթել ու դաստիարակել ինքնուրույն մտածող, կարդացածին քննադատորեն մոտեցող, բարի, արվեստասեր, սեփական հույզերը, ապրումներն ու մտքերը մայրենի լեզվով գեղեցիկ, անկաշկանդ արտահայտող, գործուն, աշխատասեր անհատներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ., Ալեքսանյան Թ., Գալստյան Ա., Մայրենիի դասագիրք 5 – րդ դասարան, 1 – ին մաս, «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, 2019թ., էջ 20 – 26
2. Գյուլամիրյան Ջ., «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», Երևան 2015, էջ 180
3. Գրիգորյան Գր., Ա. «Հայ ժողովրդական բանահյուսություն», «Լույս» հրատարակչություն, Երևան 1980, էջ 265 – 267
4. Դուլուխանյան Ա., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան «Զանգակ» հրատարակչություն, 2008թ., էջ 68 – 69
5. Խարազյան Ռ., Հայոց լեզու և դասավանդման մեթոդիկա, Երևան 2016թ., էջ 113
6. Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան 2008
7. Վասիլ Հարությունյան, «Հեքիաթների դաստիարակաչական դերը»
8. Վաչկով, «Հեքիաթաբուժություն. Ինքնագիտակցության զարգացումը հեքիաթների միջոցով
9. ՈՒշինսկի Կ. Դ. Մանկավարժական ընտիր երկեր, հատոր 1, Երևան 1958, էջ 89 – 91
10. https//forum.armedu.am, forum – 26.11.2019